ԳԼՈՒԽ ԾԸ
ՏԱՆՈՒՏԵՐ ԱՎԱԳԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս Ավագը Արարատյան գավառի Կոտայքի Եղվարդ գյուղից էր, որը գտնվում է Արա լեռան ստորոտում: Սա նույն գյուղի տանուտերն էր , մի ճարտար և հրապարակով խոսող, համարձակ, մեծամեծների կողմից հարգված ու սրտոտ մարդ էր: Գյուղացիները առանց նրա հրամանի ոչինչ չէին անում: Բայց քանի որ գյուղի ջուրը քիչ էր ու չէր բավականացնում նրանց անդաստանները ոռոգելու, ուստի գնալով հյուսիսային կողմը՝ ձորի մեջ գտան ցրված ջուր: Նրանք մեծ չարչարանքով ու շատ ծախսով առու հանին և Ղարավերանի հանդերով, որ սև ավեր է նշանակում, բերին խառնեցին իրենց ջրին: Ղարավերան գյուղի տերը մի մահմեդական էր, ծագումով դաջար՝ լիրբ ու հայհոյիչ և զազրախոս, հանդուգն ու անհնազանդ, չարագործ ու շնացող, ինքնահավան ու գոռոզ, ըստ ամենայնի՝ հաճոյակատար ու ծառա, հաճելի ու սիրելի սատանայի:

Երբ սա տեսավ, որ ջուրը խառնվեց Եղվարդի բուն ջրին, լցվեց սատանայական չար նախանձով, բորբոքվեց անիրավությամբ ու գյուղացիներից ոմանց ուղարկեց, որ գնացին և առուն քանդեցին ու ջուրը իջեցրին իրենց Սևավեր գյուղը: Եվ գյուղի այն տեր Հապուշ Ղասիմը պարտեզներ գցեց և բանջարանոց արեց, առվույտ ցանեց ու ոռոգում էր այն ջրով և չէր թողնում, որ այդ ջուրը Եղվարդ գնա:

Եղվարդցիք աղաչում էին նրան, իսկ նա չէր լսում, այլ ծեծում էր, հայհոյում և անարգանքով հետ էր դարձնում նրանց: Այս պատճառով եղվարդցիք խիստ վիրավորվեցին և գնացին գանգատագիր գրեցին, ուղարկեցին իշխանին, որն ինքը Զալի խանն էր: Սա մեծամեծներին հարցրեց երկու գյուղերի մասին, ու ասացին, որ Ղարավերան գյուղով Եղվարդի մի տան չափ հարկ չեն տալիս, այլ Հապուշ Ղասիմը իր լկտիությամբ ուզում է քանդել այնպիսի մի պատվական գյուղ, որ Երևանի ամբողջ երկրի համեմատությամբ իր մթերքներով ավելի լավ է: Այդ պատճառով խանը թուղթ գրեց այն պղծին և ասաց՝ դու իրավունք չունես այդ ջրի վրա, թույլ տուր որ դա Եղվարդ՝ իր տեղը գնա: Իսկ նրանք թուղթը առան տարան ցույց տվին այն շանը: Երբ կարդաց, պատռեց, տվեց նրանց և

ասաց՝ տարեք դրեք ձեր կանանց ամոթույքի վրա: Եվ վեր կենալով ծեծեց նրանց փայտով և խանին բերան հայհոյեց ու նրանց ծեծով հալածեց:

Նրանք գնացին, մի այլ խնդրագիր գրեցին, պատռված թուղթը դրին նոր գրածի հետ և տվին խանին: Երբ խանը լսեց թղթի պատռելու ու նրա արհամարհանքի մասին, խիստ բարկացավ սրտմտությամբ և հրամայեց նրանց ու ասաց՝ գնացեք այն շանը բռնեք և չարաչար կերպով սպանեք և կոտորեք նրանց, որոնք նրան համախոհ են, լինեն մահմեդական, թե քրիստոնյա, իսկ գյուղը քանդեցեք, նրանց հանդերը գրավեք ու նրանց հարկերը դուք տվեք:

Այս հրամանը տվեց խստությամբ, նաև թուղթ գրեց, տվեց նրանց, բերանացի էլ պատվիրեց: Իսկ նրանք առան այս հրամանը, գնացին ստորագրություն տվին միմյանց՝ թե եթե որևէ մեկը տասը տարեկանից բարձր, չգնա խանի հրամանը կատարի, խանին տուգանք վճարի: Ապա խառնիխուռն հավաքվեցին միատեղ: Մի երիտասարդի հագցրին իրենց շորերից, գլխին դրին ավել, նստեցրին էշի վրա և նրան անվանեցին ավելագլուխ էշով թագավոր և ելան բոլոր ամբոխով զուռնա-դհոլով, ծափերով ու պարերով, խաղալով ու խնդալով բոլոր արուները, մինչև իսկ կանայք ևս երգելով:

Երբ մոտեցան Ղարավերան գյուղին, տանուտեր Ավագը խրատ տվեց նրանց ու ասաց. «Միգուցե արյուն թափեք և արյենապարտ դառնաք, միայն ծեծով կիսամեռ արեք ու թողեք, այդ բավական է նրանց իբրև մահ»: Իսկ ղարավերանցիք տեսան ամբոխի բազմությունը, հասկացան, որ նրանք չարիք գործելու համար են գալիս: Իսկ անիծյալ Հապուշ Ղասիմը նստած էր աթոռին և հրաման էր տալիս պարտեզը ոռոգողներին: Նրան հայտնեցին, թե ահա ամբոխ է գալիս քո վրա, բայց նա փույթ չարեց, այլ ասաց՝ գիտեմ, ինձ մոտ աղաչելու են գալիս, իսկ ես նրանց արհամարհանքով, անհարգանքով կվերադարձնեմ:

Ահա ամբոխը եկավ հասավ. ավելագլուխը հրամայեց՝ խփեք ու սպանեք այդ շանը: Այդ ժամանակ բռնեցին նրան, գցին գետնին ոտքերի տակ և անողորմ կերպով խփում էին քացիով ու բռունցքով, փայտով ու քարով: Ոտքերը պարանով կապեցին ու քաշեցին: Իսկ այդ անիծածը իմացավ, որ մեռցնելու համար են ծեծում, անճարա-